ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 մարտի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

31
(3062)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԾ ԲԱՆԴԱՅԻ ԳՈՐԾՈՎ 7 ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Այս տարվա հունվարի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթը ուղիղ հարց էր տվել ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանին, որին ի պատասխան՝նախարարն ասել էր, թե դեպքի մասին տեղյակ չէ: Դրանից օրեր հետո ՆԳՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին, որ Արփինե Սարգսյանի հրահանգով՝ նախաձեռնված գործողությունների արդյունքում հարուցվել է վարույթ, նախօրեին էլ տեղեկացանք, որ այդ վարույթի շրջանակում ընթացող քննության արդյունքում 7 անձ ձերբակալվել է:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ»-ը հետաքրքրվել էր Արփինե Սարգսյանից նախկին պատգամավոր Նահապետ Գեւորգյանի՝ Նովոյի որդու կազմակերպված գազագողության դեպքի վերաբերյալ՝ ներկայացնելով, որ հարկային ծառայությունն անկարող է վերահսկել վիճակը, տեսուչները չեն կարողանում մոտենալ՝ գազի հաշվիչների տվյալները վերցնելու: «Կարճ ասած՝ բանդա է գործում պետության ներսում: Բայց ոստիկանությունը նույն Նահապետ Գեւորգյանի որդուն ցուցադրաբար ձերբակալեց ու շատ արագ բաց թողեց: Վախենո՞ւմ եք «բանդիտների» դեմ պայքարելուց»:

Ի պատասխան՝ Արփինե Սարգսյանը հայտարարել էր, որ տեղյակ չէ դեպքից, որից օրեր հետո ՀՀ ոստիկանությունից տեղեկացանք, որ վարույթ է հարուցվել այս առիթով, գործը ուղարկվել է ՀՀ Քննչական կոմիտեի Վաղարշապատի բաժին՝ քննության:

Երեկ ողջ օրվա ընթացքում փորձեցինք պարզել, թե ովքեր են ձերբակալվածները, քանի՞ գազալցակայան է փակվել, կապարակնքվել, սակայն ՀՀ Քննչական կոմիտեն, ի դեմս Արթուր Պողոսյանի, համառորեն մեզ տեղեկություն չտրամադրեց:

Օրվա վերջում միայն տարածվեց անանուն մի հաղորդագրություն, համաձայն որի՝ «ՔԿ գլխավոր վարչությունում քննվում է նաեւ մի շարք գազալցակայանների սեփականատեր Ն.Գ.-ի (ենթադրաբար խոսքը Նահապետ Գեւորգյանի որդու կամ փոխկապակցված անձի մասին է - խմբ) եւ մի խումբ այլ անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով՝ 1 մլրդ 79 մլն 341 հզր 404 ՀՀ դրամի հարկեր չվճարելու նպատակով ընկերության հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելու եղանակով հարկման օբյեկտը թաքցնելու, մասնավորապես՝ մեկ միասնական դիտավորությամբ հիշյալ ընկերությունների կողմից մատակարարվող եւ իրացվող բնական գազի հաշվառման սարքերի տվյալները ծրագրային միջամտություններով խեղաթյուրելու, նախապես հարմարեցված բեռնատար մեքենաներով գազի ապօրինի տեղափոխում իրականացնելու, կեղծ հաշվետվություններ կազմելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթը»:

Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ Ն. Գ.-ի 18 գազալցակայաններում հարկեր չեն վճարվել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ առողջության պարտադիր ապահովագրության ծրագրի տապալումը խլացնելու եւ բարեփոխումների պատրանք ստեղծելու համար առողջապահության նախարարությունը «հիմնովին» փոխել է բժշկական կազմակերպությունների հետ պետական պատվերով ծառայությունների մատուցման պայմանագրի ձեւը, բովանդակությունը: Այսպես, եթե մինչեւ 2024 թվականը պետական պատվերի համակարգում գործում էին առողջապահության նախարարության եւ բժշկական կենտրոնների միջեւ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրեր, ապա 2024 թվականին առողջապահության նախարարությունը «ստիպված» կիրառեց օֆերտայի հրապարակային պայմանագրի պիլոտային ծրագիրը, այն հաջորդիվ՝ 2025 թվականին, տարածվեց արդեն ամբողջ առողջապահական ծրագրերի վրա: Տեղեկացնենք, որ նոր ծրագրով առանձին բժշկական կենտրոնների հետ պայմանագրեր չեն կնքվում, եւ չեն ամրագրվում այդ կազմակերպությունների համար նախատեսվող տարեկան պետական պատվերի գումարները, բժշկական կենտրոններին հատկացվելիք գումարի վերաբերյալ դրույթ չկա: Անհասկանալի է եւ ինքնահոսի է թողնված, թե ինչ համամասնությամբ է բաշխվելու ծրագրերի գումարը հիվանդանոցների միջեւ: Սպասենք ոլորտում հերթական քաոսին:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ այս օրերին Գյումրիում թեժ քննարկվում է այն թեման, որ Փաշինյանը հրահանգել է Գյումրիում ընդդիմադիր ուժերի ցուցակներում ընդգրկված անձանց վերաբերյալ կոմպրոմատներ հավաքել: Ու, ըստ մեր աղբյուրների, դա անում է ՔՊ-ի «սրտի» թեկնածու Սարիկ Մինասյանի զարմիկի (հորաքրոջ որդու) միջոցով, որը մարզում հայտնի Կամո Ներսիսյանն է՝ Շիրակի ԱԱԾ վարչության պետը: Ըստ մեր աղբյուրների՝ Ներսիսյանին հանձնարարված է «տակնուվրա» անել Գյումրու ընդդիմադիր թեկնածուների շուրջ հավաքված մարդկանց, ինչպես նաեւ նրանց, ովքեր ցուցակներում են ու քաղաքում «դերակատարում ունեն»: Դա էր նաեւ պատճառներից մեկը, որ նախօրեին Փաշինյանն անձամբ գնաց Գյումրի, շրջեց, զրուցեց, հանդիպումներ ունեցավ ու վերադարձավ: Վերջինս ամեն գնով պատրաստվում է Գյումրիում իշխանությունը վերցնել՝ անգամ ցուցարարներից «մարդ գողանալով»: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ ողջ օրը փորձեց այս հարցի վերաբերյալ զրուցել Սարիկ Մինասյանի հետ, սակայն նա որեւէ կերպ չարձագանքեց մեր զանգերին:



«2024 թվականի նոյեմբերի դրությամբ Հայաստանում գրանցվել են 782 հազար 832 աշխատակիցներ, որոնք 2024 թվականի հաշվետու տարվա համար հայտարարագրերը ներկայացնելու են մինչեւ 2025 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ, իսկ այժմ հայտարարագիր ներկայացրել են միայն 69 հազար 813 անձ»: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան հայտնել են Պետական եկամուտների կոմիտեից: «2025 թվականի մարտի 2-ը ներառյալ 69, 83 ֆիզիկական անձ հարկային մարմին է ներկայացրել եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկներ՝ հայտարարագիր, որոնցից 59 հազար 156-ը ֆիզիկական անձի՝ 2023 թվականի հաշվետու տարվա համար, իսկ 10, 657 ֆիզիկական անձ 2024 թվականի հաշվետու տարվա համար»,- ասված է ՊԵԿ-ի պատասխանում: Ստացվում է, որ իշխանության օրակարգային լոզունգ դարձած համընդհանուր հայտարարագրման գործընթացը, որը 2025 թվականի հունվարի 1-ից պարտադիր է բոլորի համար, իրականացվել է դեռ 10 հազար 657 անձի կողմից: Հարկ է նշել, որ փետրվարի 10-ի դրությամբ հայտարարագիր էր ներկայացրել 59 հազար 052 ֆիզիկական անձ, իսկ 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 5 հազար 766 ֆիզիկական անձ:

ՎՏԱՆԳԱՎՈՐ

ԱԴՐԲԵՋԱՆ ՈՒԺԱՅԻՆՆԵ՞Ր ԿՈՒՆԵՆԱ ԱՅՍՏԵՂ

ArmLur.am-ի հետ զրույցում Քաղաքական գործիչ Սուրեն Պետրոսյանը խոսել է զերիների խոշտանգումների եւ իշխանության հայտարարությունների մասին:

-Ողջ համացանցը ողողված է հայ ռազմագերիների խոշտանգումների լուսանկարներով: Հայաստանի իշխանություններն ասում են. «Մենք առաջնորդվում ենք «մի վնասիր» սկզբունքով, եւ մենք չենք բարձրաձայնում, որպեսզի չվնասենք»: Ի՞նչ կարծիք ունեք Դուք:

-Ինչի՞ մասին չեն բարձրաձայնում, որ խոշտանգումնե՞ր կան:

Ես նույնիսկ այդ հարցի համար զարմանում եմ, որովհետեւ այս ընթացքում արդեն չկա մի մարդ, որ կասկածներ չունենա՝ արդյոք այս իշխանությունը հայկական, ազգային, պետական շահի հետ կապ ունի. իրենք կապ չունեն այդ ամենի հետ, ուրիշ ի՞նչ է պետք դա ապացուցելու համար: Նրանք անում են բոլոր հնարավոր քայլերը, որ հասկանք՝ իրենք կապ չունեն պետականության հետ: Մեր ճակատագիրն ու ապագան հանձնել ենք այլոց կառավարմանը: Մենք այստեղ կառավարիչ ենք, ոչ թե ղեկավար՝ այլ կառավարիչ: Այս մարդիկ իրենց վարքով ասում են՝ մեզ հետ հույս մի կապեք, այսինքն՝ դրանից հետո մենք սպասենք, որ իրենք պետք է սպասարկեն պետական, ազգային շա՞հ, զբաղվեն ռազմագերիների հարցո՞վ, միջազգային ատյաններում դիվանագիտական ճնշումնե՞ր անեն... ուղղակի անմտություն է: Մեր իրավիճակն այլ է, եւ ակնկալել այլ բան, քան իրականությունն է, միամտություն կլինի:

-Նիկոլ Փաշինյանը օրերս մի հոդված հապարակեց ճանապարհների, երթուղիների վերաբերյալ, որ Հայաստանի ճանապարհներն այսուհետ բաց են Ադրբեջանի համար, եւ նրանք կարող են շարժվել Կոռնիձորով դեպի Մարգարայի անցակետ, այնուհետեւ Թուրքիա: Եթե ադրբեջանցի վարորդները հոգեբանական խնդիր կունենան, կարող են թուրք վարորդները նրանց ուղեկցել: Տեղյա՞կ եք այս մասին:

-Այսինքն՝ իմ ասածը հաստատեցիք, որ Նիկոլ Փաշինյանն ավելի շատ կարող է մտահոգվել նույնիսկ ադրբեջանցի վարորդների հոգեբանական իրավիճակով եւ իրենց համար լուծումներ առաջարկել, բայց ոչ մեր ազգային շահով: Ինչ վերաբերում է ճանապարհներ բացելուն, ապա ասեմ, որ Նիկոլ Փաշինյանի օրոք երբեք փակ չեն եղել, միշտ էլ բաց են եղել: Ուղղակի փուլ առ փուլ գնում են դրա կիրառմանը:

-Պարոն Պետրոսյան, ի՞նչ վտանգներ եք տեսնում:

-Ամբողջը վտանգ է: Որեւիցէ մեկը չի կարող ասել, որ իշխանությունը կվերահսկի սա: Ալեն Սիմոնյանը վերջերս ասել էր՝ նույնիսկ կարող ենք նրանց անցուդարձը չխոչընդոտել, ու այն գումարը, որ պետք է անցուդարձին վճարեին, տարեվերջին կգանձվեն: Այսինքն՝ մաքսիմալ միջամտություն չի լինելու:

Ինչպես ենք պատկերացնում, այս իշխանությանը, որ ամեն առումով խոնարհված է Ադրբեջանի առաջ, կարող է ինչ-որ ադրբեջանցի վարորդի ստուգե՞լ: Սա բնութագրեցի մի փոքր կենցաղային մակարդակով: Իսկ ավելի լուրջ, եթե բացվեն ճանապարհները, այսուհետեւ ադրբեջանցիները, վերոնշյալ տրամաբանությամբ, ցանկացած պահի կարող են ասել՝ դուք չեք կարողանում ապահովել մեր վարորդների անվտանգությունը, որոնք օգտվում են իրենց իրավունքներից: Հետեւաբար մենք պետք է մեր ուժայիններով կարողանանք իրենց անվտանգությունն ապահովել: Եվ դա լեգիտիմ հիմք է դառնալու, որ իրենց ուժայիններն այստեղ ե՛ւ գործողություն անեն, ե՛ւ ներկայություն ապահովեն: Սա եղել է պատմության ողջ ընթացքում, ոչ թե տեսական մեջբերում է պարզապես, այդ թվում՝ նաեւ 2-րդ համաշխարհային պատերազմի ընթացքում, Գերմանիան նույն սկզբունքով է վարվել: Սա ոչ թե մասնավոր փոքր վտանգների մասին է, այլ ամբողջությամբ վտանգ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

«ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՏՈՒՄ Է ՀԱՅ ԱԶԳԻՆ» ԱԿՑԻԱՅԻ ՄԱՄՆԱԿԻՑ

«Պարոն Պաղոյանը խոսք տվեց, որ հաճախակի հանդիպումներ կկազմակերպի, առաջարկներ կանեն, բայց դեռ դրական ոչ մի քայլ չենք տեսել, դրա համար եկել ենք, նորից ենք հավաքվել», -այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասել է Կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիա իրականացնող տնտեսվարողներից մեկը:

«Բացի շրջանառության հարկը՝ գույքագրումն է ամբողջ խնդիրը, որը «տեռոր» է լինելու, ազգի վրա «տեռոր» է լինելու, մանր ու միջին բիզնեսի վրա հարձակում է լինելու» - ասել է նա:

Տնտեսվարողն անդրադարձել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի երեկ արված ստատուսին, թե ժողովուրդն է բերել իրեն, ժողովուրդն էլ կհեռացնի, եթե դրա անհրաժեշտությունը լինի: Ասաց, որ եթե այն ժամանակ՝ 2018 թվականին, հարցնեին ժողովրդին՝ կարող է 10%-ը չուզենար Նիկոլ Փաշինյանին, հիմա եթե 10%-ն ուզենա, ապա միայն շահի դիմաց կընտրի նրան:

«Պարոն Փաշինյանը հայ ազգին, կարելի է ասել, երեւի ատում է, որ այսքան ամբողջ ազգին նեղություն է տալիս բոլոր կողմերից, ոչ թե միայն մեզ՝ տնտեսվարողներիս: Թող 500 հազարանոց մեքենա չառնի: Պետական մեքենաները վաճառքի էր դրել, որ ավելի լավ առնեն, 20 մեքենա վաճառում էին, որ ավելի լավը գնեն իր համար, թող ինքն էլ մեզ նման լինի: Մեզնից մեկն է», - ասել է քաղաքացին:

Անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ վերջին եթերներից մեկում հնչեցրած արտահայտությանը՝ «հավատաք չհավատաք՝ սիրում եմ բոլորիդ», ասաց. «Տա՛ աստված, որ այդպես լիներ, որ սիրեր: Հիմա մարդիկ մի քիչ սկսեցին աշխատել, իսկ նա նորից ուզում է նեղել, որ դուրս գան... այս երկրում հնարավոր չէ իրենց «տեռորով» աշխատել: Հիմա մարդիկ ունեն 10 տարվա ապրանք: Այդ ապրանքը բերել են, մաքսազերծել են, վճարել են, եւ այն չի վաճառվել:

Այդ 10,000 դրամ արժողությամբ ապրանքը կարող է մեկը 1,000 դրամով վաճառել: Եթե այսօր վաճառողը գույքագրի 5,000-ով, հետո 1,000-ով վաճառի, խնդիր է լինելու: Ապրանքը փչանում է, վնասված է հասնում, դրանք մեծ խնդիրներ են: Եթե գույքագրումով սկսենք, այն պահանջելու է բարձր աշխատավարձով վճարվող հաշվապահություն, նաեւ աշխատատեղ, որը գործատուն չի կարող վճարել, այդ եկամուտները չունի՝ երեք հավելյալ աշխատող էլ ընդունելու:

Հիմա ինչ-որ հույսեր ունենք, որ կարող է մի բան փոխվել... մարդիկ հիասթափված են, իրեն ոգեւորությամբ ընտրել ենք, բերել ասպարեզ, բայց այժմ հիասթափված է ժողովուրդը, հավատ չունի, Փաշինյանն ամեն ինչ է մեր մեջ կորցրել», - ամփոփել է տնտեսվարողը:

ԲԱՔՎՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՇԻՆԾՈՒ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Բաքվի զինվորական դատարանում երեկ ընթանում էր Արցախի ղեկավարների եւ այլ պաշտոնյաների՝ ընդհանուր 15 անձի նկատմամբ հարուցված շինծու գործերով հերթական դատական նիստը:

Ադրբեջանական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ Արցախի նախկին նախարար Արկադի Ղուկասյանը պատասխանել է պետական մեղադրողների հարցերին:

Դատախազը նրան հարցրել է՝ արդյոք համաձայն է «Մեծ Հայաստանի» գաղափարախոսության հետ: Ի պատասխան՝ Ղուկասյանն այդ միտքը հեքիաթ է անվանել:

«Վաղուց չեմ հավատում հեքիաթներին: «Մեծ Հայաստանի» գաղափարը հեքիաթ է, ուտոպիա: Ես ապրում եմ իրական կյանքով, երբեք դրան լուրջ չեմ վերաբերվել», - ադրբեջանական կողմի հաղորդագրության համաձայն՝ ասել է նա:

Հիշեցնենք, որ մարտի 6-ին տեղի ունեցած նախորդ նիստում Արցախի նախկին նախագահներ Բակո Սահակյանն ու Արկադի Ղուկասյանը, Արցախի ՊՆ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, ինչպես նաեւ մյուս գերիներից Գուրգեն Ստեփանյանը, Դավիթ Ալահվերդյանը, Մելիքսեթ Փաշայանը, Գարիկ Մատրոսյանը, Լեւոն Բալայանը եւ Մադաթ Բաբայանը ցուցմունքներ էին տվել:

Ի ՆՇԱՆ ԲՈՂՈՔԻ

ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է, որ Երեւանում՝ Մաշտոցի պողոտայում, փողոցում առեւտուր իրականացնող Աշխեն անունով կինը պառկել է բեռնատարի առաջ եւ բղավել է՝ չտանել իր ապրանքները:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նա Մաշտոցի պողոտայում միրգ-բանջարեղեն է վաճառում, ում վաճառած ապրանքները պարբերաբար առգրավում են Երեւանի քաղաքապետարանի աշխատակիցները: Այսպես Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը պայքարում է փողոցում իրականացվող առեւտրի դեմ՝ մարդկանց չտալով այլընտրանքի հնարավորություն եւ փաստացի տիրանալով քաղաքացու գույքին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՇՈՒԿԱՆ ՉԻ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ

Անհասկանալի իրավիճակ է հեղուկ գազի շուկայում. մի բնակավայրում 90 դրամ է, մեկ այլ տեղում՝ 190 դրամ: Այս մասին հայտնել է Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը: «Մայրաքաղաքում էլ հեղուկ գազի արժեքը 1 ամսվա ընթացքում 120-ից դարձել է 190 դրամ: Այդպես էլ հասկանալի չէ՝ ինչու է վերջին տարիներին հեղուկ գազի արժեքն այսքան տատանվում:

Դեմպի՞նգն է պատճառը, ներմուծման արժեքի տատանումնե՞րը, որոշ տնտեսավորողների կողմից կամայական արժեքի սահմանու՞մը: Այս հարցերի պատասխանը պարտավոր է տալ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը: Խնդիրն առկա է ամիսներ շարունակ, այս մասին բարձրաձայնել ենք բազմիցս: Այսօր էլ կապ հաստատեցինք ՄՊՀ-ի հետ՝ հասկանալու արժեքի տատանման պատճառները: Մեզ հայտնեցին, որ հեղուկ գազի շուկան խիստ մրցակցային է, ներմուծումներ են իրականացնում շուրջ 80 տնտեսավարող սուբյեկտ, եւ քանի որ շուկայում առկա չեն գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ, իրենք խնդրին միջամտելու իրավունք չունեն: Իսկ ինչ վերաբերում է որոշ գազալցակայանների կողմից շուկայականից ցածր արժեքի սահմանմանը, դա կարող է լինել մարքեթինգային քայլ՝ տվյալ ժամանակահատվածում ավելի շատ սպառողներ ունենալու նպատակով: Այդուհանդերձ, կարծում եմ, որ ՄՊՀ-ն պարտավոր է իրականացնել ուսումնասիրություն՝ ներկայացնելով այն պատճառները, որոնք նման իրավիճակի են հանգեցրել:

Աբսուրդ է, որ 30 կմ անցնելուց հետո ականատես ես լինում հեղուկ գազի գնի այսպիսի ակնառու եւ անտրամաբանական տարբերության: Ստացվում է, որ պատկան մարմինների անտարբերության եւ անգործության հետեւանքով տուժում է կրկին ՀՀ քաղաքացին՝ չիմանալով ինչպես դիմակայել հերթական թանկացման պայմաններում»,- գրել է նա:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՓԱԿՈՒՄ Է

Վեց շաբաթվա վերանայումից հետո Միացյալ Նահանգները պաշտոնապես փակում է Միջազգային զարգացման գործակալության (USAID) ծրագրերի 83%-ը, X սոցիալական ցանցում ասել է ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն:

«Վեց շաբաթ վերանայումից հետո մենք պաշտոնապես փակում ենք USAID-ի ծրագրերի 83%-ը: Այժմ չեղարկվող 5200 պայմանագրերը տասնյակ միլիարդավոր դոլարներ են ծախսել այնպիսի եղանակներով, որոնք չեն ծառայել, եւ երբեմն նույնիսկ վնասել են Միացյալ Նահանգների հիմնական ազգային շահերը»,- գրել է Ռուբիոն: Նա նշել է, որ մնացած մոտ 1000 ծրագրերն այժմ պետք է ավելի արդյունավետ կերպով իրականացվեն Պետդեպարտամենտի վերահսկողության ներքո:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԽՈՒԺԵԼՈՒ ՆՊԱՏԱԿ Է ՏԵՄՆՈՒՄ

Իսպանիայի խորհրդարանի պատգամավոր Ջոն Ինյարիտուի կարծիքով՝ Ադրբեջանի կողմից քարոզչական դաշտ նետված այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջան» նարատիվը պատմությունը վերաշարադրելու, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ իրագործած էթնիկ զտումներն արդարացնելու եւ Հայաստանից նոր տարածքներ օկուպացնելու նպատակ է հետապնդում:

«Ինչպես հայտնի է, Ադրբեջանը նոր քարոզչական արշավ է սկսել՝ փորձելով վերաշարադրել պատմությունն այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջանի» պահանջով, որն ընդգրկում է Հայաստանի գրեթե ողջ տարածքը: Այս նարատիվը նպատակ ունի արդարացնել արցախահայության էթնիկ զտումները եւ հող նախապատրաստել նոր ներխուժման համար՝ հայկական հողերն անվանելով «պատմական Ադրբեջան»», - ասել է Ինյարիտուն:

Նրա բնորոշմամբ՝ Ադրբեջանը նման հայտարարություններով նպատակ ունի դիվանագիտական եւ քաղաքական ճնշում գործադրել Եվրամիության վրա:

«Շատ պարզ է, որ այս հայտարարությունների վերջնական նպատակը ԵՄ-ի վրա դիվանագիտական ճնշում գործադրելն է՝ փորձելով կառույցի գործունեությունն ավելի համապատասխանեցնել Ադրբեջանի շահերին՝ հաճախ օգտագործելով էներգետիկ գործարքները»,- ընդգծել է Ջոն Ինյարիտուն:

Անդրադառնալով Հայաստանում Եվրոպական միության դիտորդական առաքելության գործունեության վերաբերյալ Ադրբեջանից հնչող դժգոհություններին եւ առաքելության գործունեության դեմ քարոզչություն իրականացնելու Բաքվի նպատակներին՝ պատգամավորը կարեւոր է համարել, որ ԵՄ դիտորդական առաքելության մանդատը հստակորեն ուրվագծված է հենց ԵՄ-ի կողմից:

«ԵՄ դիտորդական առաքելությունը կենտրոնանում է հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով տիրող իրավիճակի մոնիթորինգի, կայունության խթանման եւ հետագա հակամարտությունը կանխելու համար միջազգային համաձայնագրերի պահպանման վրա: Այս առումով առաքելության վերաբերյալ Ադրբեջանի մտահոգությունները դժվար է հասկանալ, հատկապես մի երկրի համար, որը, թվում է, ձգտում է խաղաղության համաձայնագրի ստորագրմանը»,-նշել է պատգամավորը: Նրա դիտարկմամբ՝ ԵՄ դիտորդական առաքելության դեմ Ադրբեջանի բողոքները կարող են ի հայտ գալ նաեւ երրորդ երկրների՝ մասնավորապես Թուրքիայի կամ Ռուսաստանի ճնշումների հետեւանքով: «Առաքելությունը կոչված չէ մի կողմին մյուսի նկատմամբ գերադասելու, ոչ էլ հետախուզական գործունեությամբ է զբաղվում: Նրա հիմնական նպատակն է նպաստել տարաձայնությունների խաղաղ կարգավորմանը, ինչը, անշուշտ, հակասում է հերթական անգամ Հայաստան ներխուժելու Ադրբեջանի փորձերին»,-նկատել է Ինյարիտուն:

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՔՈՐԴ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Մարկ Քարնին կիրակի ընտրվել է Կանադայի իշխող Լիբերալ կուսակցության նոր առաջնորդ եւ կլինի երկրի հաջորդ վարչապետը: Սրանք ներկուսակցական ընտրությունների արդյունքներն են, որոնցում նա ստացել է այս քաղաքական ուժի անդամների ձայների 85,9%-ը: Քարնին վարչապետի պաշտոնը կզբաղեցնի միայն այն բանից հետո, երբ գործող վարչապետ Ջասթին Թրյուդոն հրաժարականի պաշտոնական նամակ ներկայացնի: Սպասվում է, որ դա տեղի կունենա մոտ օրերս: Դրանից հետո Քարնիին առաջարկվելու է կառավարություն կազմել եւ երդում տալ: Կանադայի հաջորդ համընդհանուր ընտրությունները նշանակված են հոկտեմբերի 20-ին, սակայն ակնկալվում է, որ Քարնին արտահերթ ընտրություններ կհրավիրի, որոնք կարող են տեղի ունենալ արդեն գարնանը: Բանն այն է, որ մարտի 24-ին Ազգային խորհրդարանը կվերսկսի իր աշխատանքը, որը պետք է վստահության քվե տա նոր վարչապետին:

ՀԵՏԱՁԳՎԵՑ

Երեւանի քաղաքապետարանից, ArmLur.am-ին տեղեկացրել են, որ մարտի 10-ին նախատեսված Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցությունը տեղի կունենա մարտի 17-ին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նիստը չի կայացել, քանի որ զեկուցվող հարցերը քիչ էին: Երեւանի քաղաքապետարանից հայտնեցին նաեւ, որ նպատահարմար են համարել մյուս երկուշաբթի անել:

ԱՆԿԱԽ ՄԵԽԱՆԻԶՄ

Անհայտ կորածների հարցով միջազգային հանձնաժողովը Երեւանին եւ Բաքվին առաջարկել է անհայտ կորածների հարցով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ԴՆԹ համեմատության անկախ մեխանիզմ ներդնել: Այս մասին նշված է Անհայտ կորածների հարցերով միջազգային հանձնաժողովի՝ Հայաստանի եւ Ադրբեջանի վերաբերյալ զեկույցներում: Անհայտ կորածների հարցերով միջազգային հանձնաժողովն այս օրերին Բաքվում ներկայացրել է իր զեկույցը, որտեղ նշվում է, որ եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում կան առաջին եւ երկրորդ պատերազմների ժամանակ անհայտ կորածներ, իսկ ռազմական գործողությունների տարածքում հայտնաբերված մասունքները կարող են պատկանել երկու կողմերին էլ: Այս մեխանիզմի ներդրումը նույնականացումը հաստատելու արդյունավետ միջոցներից մեկը կարող է դառնալ:

«Այս մեխանիզմը, բացի երկու ժողովուրդների ընտանիքների համար իրենց հարցերին պատասխաններ ստանալու հնարավորությունից, նաեւ կնպաստի համագործակցությանն ու հաշտեցմանը: Դա հնարավորություն կտա ցուցադրել հավաքական հավատարմությունը անհայտ կորած անձանց որոնման խնդրի լուծմանը, ինչը դուրս է ազգային սահմաններից»,- ասված է զեկույցում:

ՀԱՐԿԵՐ ՉԵՆ ՎՃԱՐՎԵԼ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվում է մի շարք գազալցակայանների սեփականատեր Վ. Կ.-ի եւ մի խումբ անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով՝ 1 մլրդ 272 մլն 101 հզր 940 ՀՀ դրամի հարկեր չվճարելու նպատակով ընկերության հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելու եղանակով հարկման օբյեկտը թաքցնելու, մասնավորապես՝ մեկ միասնական դիտավորությամբ հիշյալ ընկերությունների կողմից մատակարարվող եւ իրացվող բնական գազի հաշվառման սարքերի տվյալները ծրագրային միջամտություններով խեղաթյուրելու, նախապես հարմարեցված բեռնատար մեքենաներով գազի ապօրինի տեղափոխում իրականացնելու, կեղծ հաշվետվություններ կազմելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթը:

ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԿԱՆԽՎԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Պարույր Ավագյանը, ներգրավվելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը, 2024 թվականի հունիսի 6-ին «Watsapp» հավելվածի միջոցով կապ հաստատելով Արման Հակոբյանի հետ եւ ներկայանալով քրեական հեղինակություն հանդիսացող «Գրեցիայից Արամո»-ի անունից, Արման Հակոբյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել Արմավիր քաղաքում հանդիպելու վերաբերյալ:

Նույն օրը՝ ժամը 22:00-ից 00:00-ի սահմաններում, Արմավիր քաղաքի Շահումյան փողոցի 3/7 հասցեում գտնվող «Մերսի» ռեստորանում, Արման Արմենի Հակոբյանը հանդիպել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակիցներ, խմբավորման մեջ եւ շրջապատում «Չերեմուշկեցի Պրո» մականունով հայտնի՝ Պարույր Ավագյանի, Բաբկեն Կարապետյանի եւ նույն խմբավորման անդամներ հանդիսացող, քննությամբ ինքնությունները չպարզված եւս 6-7 անձանց հետ, որի ընթացքում տեսակապի միջոցով հանդիպմանը մասնակցել է նաեւ արտերկրում բնակվող «Գրեցիայից Արամո» մականվամբ ներկայացած՝ շրջապատում «գող Նոդարի Արամո» մականունով հայտնի, քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ քրեական հեղինակության կարգավիճակ ունեցող՝ Արամ Կարապետյանը:

Հանդիպման ընթացքում մասնավոր հարցերին առնչվող վեճը լուծելու նպատակով խոսակցություն է ծավալվել Արման Հակոբյանի եւ ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքի բնակիչ, ազգությամբ ադրբեջանցի ոմն Վախիդի միջեւ առկա գումարային հարցերի վերաբերյալ, որի ընթացքում հանդիպմանը մասնակցող վերը նշված անձանց կողմից Արման Հակոբյանի եւ վերջինիս ընտանիքի անդամների հասցեին հնչեցրած սպառնալիքների եւ ճնշումների ազդեցության տակ՝ իր եւ իր ընտանիքի անդամների անվտանգության վերաբերյալ առաջացած վախից դրդված, Արման Հակոբյանն ընդունել է ոմն Վախիդին իբրեւ թե 1.100.000 ՌԴ ռուբլի պարտք լինելու հանգամանքը եւ պարտավորվել է նշված գումարը փոխանցել «Գրեցիայից Արամո»-ին, նույն ինքը՝ Արամ Սամվելի Կարապետյանին: Գումարը փոխանցելու վերաբերյալ Արման Հակոբյանի համաձայնությունը ստանալով եւ չբավարարվելով ձեռք բերված պայմանավորվածությամբ, անօրինական օգուտ ստանալու նպատակով հանդիպման ընթացքում Պարույր Ավագյանը Արամ Կարապետյանի հրահանգով պահանջել եւ Արման Հակոբյանից իր կամքին հակառակ ստացել է վերջինիս պատկանող եւ Ռուսաստանի Դաշնությունում գտնվող «Պորշ Կայեն» մակնիշի ավտոմեքենայի բանալիները եւ տեխնիկական անձնագիրը, ինչի արդյունքում օրեր անց հիշյալ՝ 4.000.000 ՀՀ դրամ արժողությամբ ավտոմեքենան ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքի Լիտերատուրնայա 6Ա շենքի բակից քննությամբ դեռեւս չպարզված անձանց կողմից հափշտակվել է:

Այնուհետեւ, Արման Հակոբյանը, պարտավորությունից դրդված, հիշյալ՝ իբրեւ թե պարտք հանդիսացող 1.100.000 ՌԴ ռուբլի գումարը «Պրո»-ի միջոցով «Արամո»-ին փոխանցելու նպատակով 2024 թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, պայմանավորվածության համաձայն, Արմավիր քաղաքի Մյասնիկյան փողոցում հանդիպել է Էդուարդ Արթուրի Եղիազարյանին, սակայն հանդիպման ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողների կողմից վերջինս ձերբակալվել է եւ գումարի փոխանցումը տեղի չի ունեցել: Այսինքն՝ Պարույր Մարատի Ավագյանին մեղսագրվում է հանցավոր արարքների կատարում, որոնք նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ եւ 10-րդ կետերով: Գործը ուղարկվել է դատարան:

Ք. Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԻՆԸ ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ԹԱՔՑՐԵԼ

Օրեր առաջ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության թմրամոլության ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները, վարչությունում ստացված օպերատիվ տվյալներն իրացնելիս եւ համագործակցելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության ծառայողների հետ, ապա նրանց միացած ՀՀ ՆԳՆ Ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արաբկիրի բաժնի եւ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկների հետ, Բաղրամյան պողոտայից ապօրինի թմրանյութ ձեռք բերելու պահելու եւ իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալել եւ ոստիկանության Արաբկիրի բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչ 33-ամյա Արմենուհի Հ.-ին:

Վերջինս եղել է Honda մակնիշի ավտոմեքենայով: Արդեն տեղում կասկածյալը ենթարկվել է անձնական խուզարկության եւ կրծկալի միջից հայտնաբերվել է փաթեթ՝ կպչուն ժապավենով փաթեթավորված սպիտակ բյուրեղանման զանգված, որը նման է «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի, որը կազմել է մոտ 125 գրամ:

Դեպքի փաստով փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԱՐԳԵԼՎԱԾ ՈՐՍԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Մարտի 8-ի առավոտյան Համայնքային ոստիկանության Թալինի բաժնի ծառայողները Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների հետ բնապահպանական վերահսկողություն իրականացնելիս Թալին-Թաթուլ ճանապարհին ստուգել են «ՎԱԶ-2106» մակնիշի մի մեքենա:

Նրանք մեքենայում հայտնաբերել են «ԻԺ-27» եւ «ԻԺ-18» մոդելի որսորդական ողորկափող երկու հրացան, 12 մմ տրամաչափի 19 փամփուշ եւ տափաստանային 19 արտույտ, որոնց որսն արգելված է:

Պարզվել է, որ 26-ամյա վարորդը եւ 25-ամյա ուղեւորը Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղի բնակիչ են: Վարորդը հայտնել է, որ հրացանները պատկանում են հանգուցյալ պապին, որոնց համար չունի համապատասխան փաստաթղթեր, իսկ արտույտներին ինքն է որսացել:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Թալինի քննչական բաժին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Ինչպես ArmLur.am-ը հայտնել էր, ԱԱԾ սպա Արամ Գասպարյանը ձերբակալվել էր եւ նրա նկատմամբ ներկայացվել էր կալանավորման միջնորդություն:

Դատարանը որոշել է վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել տնային կալանքը, գրավը եւ բացակայելու արգելքը: Քննչական կոմիտեից տեղեկացրել են, որ Գասպարյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում խուլիգանությանը հանցակցելու (2003 թվականին ընդունված ՔՕ-ի 38-258-րդ հոդվածի 1-ին մասով եւ 3-րդ մասի 1-ին կետով) մասով, ինչպես նաեւ հանցակցությամբ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու մասով:

Նշվում է, որ նա է վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից Սյունիքի մարզ կատարած այցի ժամանակ մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու, գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում բացահայտված կազմակերպիչներից մեկը:

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության հերթական հայցադիմումը Հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մարտի 7-ի վճռով բավարարվել է:

Դատախազության փոխանցմամբ՝ դատական ակտը, օրինական ուժի մեջ մտնելուց հետո, Հայաստանի Հանրապետությանն է վերադարձվելու Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաշտարակին հարող տարածքում գտնվող, 688 հազար ԱՄՆ դոլարին համարժեք 271 միլիոն 475 հազար դրամ կադաստրային արժեքին մոտարկված շուկայական արժեքով 7090 քմ մակերեսով հողամասը: Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը հայցադիմումով դատարանից պահանջել էր անվավեր ճանաչել Երեւանի քաղաքապետի եւ Ա.Ս.-ի միջեւ 2005 թվականի հուլիսի 21-ին կնքված առուվաճառքի պայմանագիրն ու կիրառել անվավերության հետեւանքներ: Մասնավորապես՝ պահանջվել էր որպես հետեւանք անվավեր ճանաչել հողամասի առուվաճառքի պայմանագրի հիման վրա նշված անշարժ գույքի նկատմամբ կատարված Ա.Ս.-ի իրավունքի պետական գրանցումը:

Հիշեցնենք, որ 2025 թվականի մարտի 6-ին դատարանի կողմից բավարարվել էր Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության՝ նույն տարածքում գտնվող մեկ այլ հողամասի վերաբերյալ հայցադիմումը: Այդ վճռի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանն է վերադարձվելու Երեւան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաշտարակին հարող տարածքում գտնվող՝ «անտառային» նպատակային նշանակությամբ, 254 միլիոն 244 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 6640 քմ մակերեսով հողամասը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 7-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 216 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՐԱԿԱՐԳԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԻ ՄԱՄՆ Է ՏՐՎԵԼ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների այն ուսուցիչները, ովքեր տարակարգով որակավորում են ստացել, մեր թղթակցին բողոքել են, որ հունվար ամսվա համար նախատեսված տարակարգով տրվող գումարների մի մասն է իրենց փոխանցվել: Տարակարգ ունեցող տարբեր դպրոցների ուսուցիչներին նրանց հասանելիք գումարի տարբեր չափը, հասանելիքի 35-60 տոկոսն է փոխանցվել, ուսուցիչները չգիտեն, թե դա ինչ տրամաբանությամբ է արվել: Ուշագրավ է, որ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող մարզի ավագ դպրոցներում տարակարգով նախատեսված գումարները, ի տարբերություն Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող դպրոցների, ամբողջությամբ փոխանցվել են: Տավուշի ուսուցիչները դժգոհում են, որ Տավուշի մարզպետարանի պաշտոնյաներին պարգեւատրելու համար պետբյուջեում գումար կա, իսկ տարակարգով նախատեսվածը ուսուցիչներին վճարելու համար գումար չկա:

ՄԱՐԶՊԵՏԸ ՉԳԻՏԻ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե 2025 թ. փետրվարի 26-ի դրությամբ որքա՞ն է Տավուշի մարզում 3-րդ, 4-րդ, 5-րդ կարգի վթարային առանձնատների, բազմաբնակարան շենքերի թիվը, դրանք ո՞ր բնակավայրերում են: Մարզպետարանից պատասխանել են. «Ձեր տեղեկատվության պահանջին կրկին անգամ տեղեկացնում եմ, որ 3-րդ, 4-րդ, 5-րդ կարգի վթարայնություն ունեցող տների մասին տեղեկատվությունը անհրաժեշտ է 5-10 տարին մեկ թարմացման, այն իրականում մեծածավալ աշխատանք է եւ ներկայումս թարմացված տեղեկատվություն չունեք, համայնքների ղեկավարները ստացել են համապատասխան առաջարկություն ցուցակները թարմացնելու վերաբերյալ մասնագիտական աշխատանք պատվիրելու համար, սակայն գործընթացը պահանջում է մեծ ֆինանսական ռեսուրսներ»:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ ՄՏԵՐԻՄ Է

Իջեւանի Ենոքավան գյուղում գործող հայտնի «Ապագա տուր» հանգստի գոտու սեփականատեր Արտակ Չիբուխչյանը 5-րդ օրն է ինչ Երեւանում՝ Թումանյանի արձանի մոտ, հացադուլ էր հայտարարել, որպեսզի, ինչպես ինքն է ասում, իր ընկեր, Բաքվում հացադուլի մեջ գտնվող Ռուբեն Վարդանյանին ցույց տա, որ մեր օրերում հացադուլը չի գնահատվում, այն անարդյունավետ միջոց է: Արտակ Չիբուխչյանը մոտ հարաբերություններ ունի արմատներով ենոքավանցի Նիկոլ Փաշինյանի հետ. Նիկոլ Փաշինյանը, իր ընտանիքի անդամները շատ են այցելել Արտակ Չիբուխչյանին պատկանող հանգստի գոտի: Տարիներ առաջ Չիբուխչյանն այդ հանգստի գոտում ծածանվող այլ երկրների դրոշների կողքին կանգնեցրել էր Ադրբեջանի դրոշը, ինչը մեծ աղմուկ ու դժգոհություն էր առաջացրել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՈՉ՝ ՇՎԵԴԻԱՅԻ ՌԻԿՍԴԱԳԻՑ

ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Շվեդիա-Հայաստան խորհրդարանական բարեկամական խումբը կոչ է անում անհապաղ միջազգային գործողություններ ձեռնարկել Բաքվում ապօրինի եւ չինծու մեղադրանքներով անազատության մեջ պահվող հայերին ազատելու համար՝ զգուշացնելով, որ անգործությունը կխրախուսի հետագա բռնաճնշումները եւ մարդու իրավունքների խախտումները:

«Մենք՝ Շվեդիայի Ռիկսդագում (Շվեդիայի Ազգային ժողով) Շվեդիա-Հայաստան բարեկամության խմբի ներքոստորագրյալ անդամներս, վճռականորեն դատապարտում ենք Ադրբեջանի կառավարության կողմից մարդու իրավունքների կոպիտ եւ համակարգված խախտումները: Հայ բանտարկյալների, այդ թվում՝ քաղաքական գործիչների եւ քաղաքացիական անձանց նկատմամբ ապօրինի բանտարկությունը, ֆիզիկական եւ հոգեբանական խոշտանգումները եւ քաղաքական հետապնդումները ներկայացնում են ոչ միայն հումանիտար ճգնաժամ, այլեւ միջազգային իրավունքի ակնհայտ խախտում: Անհիմն մեղադրանքներով անձանց կամայական կալանավորումը, որն օգտագործվում է որպես քաղաքական բռնաճնշումների գործիք, ուղղակի հարձակում է մարդու հիմնարար իրավունքների վրա»,- նշված է հայտարարության մեջ:

Նշվում է, որ հայ խաղաղ բնակիչների եւ ռազմագերիների (գերիների) շարունակվող բանտարկությունը Ժնեւի կոնվենցիաների եւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի բացահայտ խախտում է: «Այս գործողությունները, որոնք իրականացվել են եւ մնացել են անպատիժ, պետության կողմից արտոնված խոշտանգումներ եւ բռնի անհետացումներ են, որոնք նպատակ ունեն լռեցնելու քաղաքական այլախոհությունը եւ վախ սերմանելու», - ասված է հայտարարության մեջ:

Հայտարարությունում շեշտվում է, որ անկախ իրավապաշտպան կազմակերպությունները եւ իրավական փորձագետները փաստագրել են այս կալանավորների նկատմամբ անմարդկային եւ նվաստացուցիչ վերաբերմունքը:

«Նրանք, ենթարկվելով դաժան խոշտանգումների, զրկված լինելով փաստաբաններից, ստիպված են եղել դիմանալ կեղծ դատավարություններին, նրանք դարձել են վայրագությունների զոհ: Սա վնասում է Ադրբեջանի միջազգային հեղինակությունը եւ վտանգավոր նախադեպ է ստեղծում ավտորիտար ռեժիմների համար ամբողջ աշխարհում», - ասված է հայտարարության մեջ:

Բարեկամական խմբի հայտարարությունը նաեւ շեշտել է, որ այս խախտումներն առանձին միջադեպեր չեն, այլ դիտավորյալ հանցագործություններ, որոնք խարխլում են մարդու իրավունքների եւ միջազգային իրավունքի հիմքերը:

«Ադրբեջանի կողմից քաղբանտարկյալներին շարունակաբար որպես լծակ օգտագործելը եւ նրանց նկատմամբ համակարգված վատ վերաբերմունքը ռազմավարություն է՝ ապակայունացնելու տարածաշրջանային խաղաղությունն ու արդարությունը», - ընդգծված է խմբի հայտարարության մեջ: Հայտարարության ներքոստորագրած պատգամավորները նաեւ ընդգծել են, որ միջազգային ուժեղ արձագանքի բացակայությունը միայն քաջալերում է հետագա չարաշահումները եւ բռնաճնշումները:

Հայտարարության մեջ ընդգծվում է, որ նման կոպիտ խախտումների դեմ միջազգային հանրության անգործությունը հավասարազոր է մեղսակցության՝ ավտորիտարիզմի ծաղկմանը եւ ճգնաժամի խորացմանը:

«Սա միայն դիվանագիտության խնդիր չէ, բարոյական եւ իրավական պարտավորություն է: Միջազգային հանրությունը չի կարող ձեռքերը ծալած նստել, քանի դեռ նման դաժան անարդարությունները շարունակվում են: Այս գործողությունները ոչ միայն հարձակում են մարդու արժանապատվության վրա, այլ նաեւ ուղղակի մարտահրավեր են այն սկզբունքներին, որոնք պաշտպանում են համաշխարհային կայունությունը, արդարությունը եւ հիմնարար իրավունքները», - ասված է բարեկամական խմբի հայտարարության մեջ, որում նաեւ շեշտված է, որ աշխարհը հետեւում է, եւ այս ճգնաժամի արձագանքը կսահմանի արդարության եւ մարդու իրավունքների հանդեպ հավատարմությունը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԳՆԵՐԸ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ

Գարունն ամենալավ եղանակն է ճամփորդության համար բոլոր առումներով: Եվրոպայում եւս գարուն է, ինչը նշանակում է, որ հանգստյան օրերը կարող եք անցկացնել եվրոպական որեւէ երկրում, ուսել կրուասան եւ օրինակ խմել անգլիական թեյ: Այսպիսով՝ ArmLur.am-ը ներկայացնում է դեպի Եվրոպա տոմսերի արժեքները՝ ըստ ավիաընկերությունների:

Ուղիղ թռիչքը դեպի Փարիզ Air France ավիաընկերության ինքնաթիռներով կարժենա մոտ 400 եվրո՝գրեթե 170 հազար ՀՀ դրամ մեկ անձի համար:

Lufthansa ավիաընկերության ինքնաթիռներով դեպի Բեռլին մեկ կանգառով թռիչքի արժեքը կկազմի մոտ 450 եվրո՝ գրեթե 195 հազար դրամ: Alitalia ավիաընկերության միջոցով դեպի Հռոմ ուղիղ թռիչքով կարող եք հասնել մոտ 370 եվրո վճարելով՝ այսինքն գրեթե 158 հազար ՀՀ դրամ:

Թերեւս ամենաթանկը Ձեզ համար կարող է լինել անգլիական թեյը, քանի որ British Airways ավիաընկերությունով Լոնդոն հասնելու միայն մեկ ուղղությունն արժե 500 եվրո, այսինքն՝ մոտ 215 հազար դրամ: Հարկ է նշել, որ գները կարող են փոփոխվել կախված ամրագրման ժամանակից եւ տեղերի առկայությունից:

Նշված արժեքներով սահմանափակվել պետք չէ, անհրաժեշտ է ստուգել նաեւ այլ ավիաընկերությունների առաջարկները՝ լավագույն տարբերակը գտնելու համար: Օրինակ, որոշ ավիաընկերություններ մարտի 8-ից մեկնարկող կանանց միամսյակի շրջանակում առաջարկում են հատուկ զեղչեր կամ ակցիաներ:

Հիշեցնենք, որ թռիչքի արժեքը կախված է բազմաթիվ գործոններից, ուստի խորհուրդ է տրվում համեմատել տարբեր առաջարկներ, եւ ամրագրել տոմսերը հնարավորինս շուտ՝ լավագույն արժեքով ձեռք բերելու համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 33 պատահար. 4 մարդ զոհվել է, 50-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ դասական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Կենտրոն համայնք, Մաշտոցի պողոտա, թիվ 5/6 հասցեում գտնվող 75,1 քմ բնակելի տուն, 9,95 գծմ պարիսպ եւ 0,00482 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 63723170 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 27.03.2025թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը:

ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

Քրոնիկ ոչ վարակիչ հիվանդությունները (ՔՈՎՀ) լուրջ մարտահրավեր են ողջ աշխարհում առողջապահական համակարգերի համար: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ 2022թ. ՔՈՎՀ-ը եղել է աշխարհում մահացության հիմնական պատճառը՝ կազմելով բոլոր մահվան դեպքերի 74%-ը (մոտ 41 միլիոն մարդ): Կանխատեսումների համաձայն՝ մինչեւ 2050թ. այս ցուցանիշը կհասնի 86%-ի՝ հանգեցնելով տարեկան մոտ 90 միլիոն մահվան դեպքի:

«Հայաստանում ՔՈՎՀ-ից մահացությունը 2021թ. կազմել է ընդհանուր մահերի 80%-ը. առաջին տեղում սիրտ-անոթային հիվանդություններն էին, որոնք դարձել են բոլոր մահերի 54%-ի պատճառ: Գարնան ամիսներին ՔՈՎՀ-ի սրացումների հաճախականությունը զգալիորեն աճում է, ինչը հանգեցնում է հոսպիտալացումների թվի ավելացման, առողջապահական ծախսերի բարձրացման եւ հիվանդների կյանքի որակի վատթարացման», - այս մասին հայտնում է «Հերացի» վերլուծականը:

Գարնան ամիսներին սրացող քրոնիկական հիվանդությունների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում՝

Մարսողական համակարգի հիվանդությունները, այդ թվում՝ քրոնիկական գաստրիտը, կոլիտը, ինչպես նաեւ ստամոքսի եւ տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդությունը: Սրացումների հիմնական պատճառները կապված են իմունային համակարգի թուլացման, սննդակարգում B եւ C վիտամինների պակասի (որոնք կարեւոր են ստամոքսի լորձաթաղանթի վերականգնման համար), ստամոքսահյութի թթվայնության ախտաբանական փոփոխությունների եւ սթրեսի հետ:

Բացի այդ, որոշ մարդիկ՝ հատկապես կանայք, գարնանը դիմում են խիստ դիետաների նիհարելու նպատակով, ինչը նվազեցնում է իմունային պաշտպանությունը եւ նպաստում քրոնիկական սթրեսի առաջացմանը: Վերջինս ուղեկցվում է արյան մեջ ադրենալինի մակարդակի բարձրացումով, ինչի հետեւանքով վատթարանում է ստամոքսի լորձաթաղանթի բջիջների սնուցումը, որոնց մի մասը ենթարկվում է ատրոֆիայի եւ քայքայվում՝ առաջացնելով բորբոքման օջախներ:

Ալերգիկ հիվանդություններ. նրանց սրացման հիմնական պատճառներից մեկը, ինչպես նշվեց, օդում մեծ քանակությամբ ծաղկափոշու եւ փոշու առկայությունն է: Հետազոտությունների տվյալների համաձայն՝ միայն այս գործոնը ՔՕԹՀ-ի եւ բրոնխիալ ասթմայի սրացումների հաճախականությունը բարձրացնում է 15-30%-ով:

Մաշկային հիվանդություններ. գարնանը հաճախ սրվում են մաշկային պաթոլոգիաները, ինչպես օրինակ՝ փսորիազը, ատոպիկ դերմատիտը եւ այլ քրոնիկական հիվանդություններ: Սրացման հիմնական գործոններն են արեւի լույսի անբավարարությունը, սթրեսը եւ իմունային համակարգի թուլացումը, որոնք կարող են զգալիորեն ծանրացնել հիվանդությունների ընթացքը: Բացի այդ, գարնան ամիսներին հաճախակի սրացող մարսողական համակարգի հիվանդությունները նույնպես բացասաբար են ազդում մաշկաբանական խնդիրների վրա:

Սիրտ-անոթային հիվանդություններ (ՍԱՀ). արեւային ճառագայթման ուժեղացումը եւ մթնոլորտային ճնշման կտրուկ տատանումները բացասաբար են ազդում մեթեոզգայուն մարդկանց, սիրտ-անոթային հիվանդություններ ունեցող անձանց, վեգետաանոթային դիստոնիայով հիվանդների ինքնազգացողության վրա: ՍԱՀ ունեցող հիվանդների մոտ բարձրանում է սրտամկանի ինֆարկտի, ուղեղային կաթվածի, հիպերտոնիկ կրիզի, տախիկարդիայի եւ առիթմիաների առաջացման հավանականությունը:

Հոգեկան հիվանդություններ. գարնանը օրվա լուսավոր ժամերի երկարացումն ու արեւային ճառագայթման ինտենսիվության աճն ազդում են հորմոնների եւ նեյրոմեդիատորների արտադրության վրա, որոնք կարգավորում են մարդու տրամադրությունը, քունը եւ վարքագիծը: Այս փոփոխությունները երբեմն խաթարում են նյարդաբանական հավասարակշռությունը՝ նպաստելով հոգեկան խանգարումների, այդ թվում՝ դեպրեսիայի, բիպոլյար աֆեկտիվ խանգարման, շիզոֆրենիայի, ինչպես նաեւ տագնապային եւ ֆոբիկ խանգարումների սրացմանը», - նշվում է հաղորդագրությունում:

ՆԱՏԱԼԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԻԱՅՈՒՄ ԱՂԵՏ Է

Մարտի 6-ից Սիրիայի Ջեբլա քաղաքում, Լաթաքիայի մի քանի թաղամասում եւ Լաթաքիա ու Տարտուս նահանգների լեռնային հատվածներում կատաղի մարտեր են բռնկվել սիրիական անվտանգության ուժերի եւ Դամասկոսում նոր իշխանության դեմ հանդես եկող զինված կազմավորումների միջեւ: Սիրիայի կենտրոնական իշխանություններն ուժեր են ուղարկել տարածաշրջան: Այն բանից հետո, երբ առափնյա հատվածի բնակավայրերի նկատմամբ վերականգնվել է կենտրոնական իշխանության վերահսկողությունը, սկսել են հաղորդագրություններ ստացվել ալեւիների զանգվածային մահապատիժների մասին: Խոսվում է հարյուրավոր սպանվածների, այդ թվում՝ կանանց եւ երեխաների մասին:

Սիրիայի անվտանգության ուժերը «Հըզբոլլահին» մեղադրել են երկրում իրավիճակն ապակայունացնելու մեջ: Իրադարձությունների նման վարկած Al Arabiya հեռուստաալիքին ներկայացրել է Սիրիայի Լաթաքիա նահանգում անվտանգության ուժերի ներկայացուցիչ Սաջիդ ադ-Դիքը: Նա հայտնել է, որ անվտանգության ուժերը ձերբակալել են հինգ մարդու, որոնք բարձր պաշտոններ են զբաղեցրել տարածաշրջանում նախկին ռեժիմի օրոք, նա, սակայն, չի բացահայտել նրանց ինքնությունը՝ վկայակոչելով անվտանգային նկատառումները:

Նշենք, որ անվտանգության ուժերի եւ Սիրիայի տապալված նախագահ Բաշար Ասադի կողմնակիցների միջեւ երկօրյա բախումների եւ դրան հաջորդած ջարդերի հետեւանքով ավելի քան 1,000 մարդ է զոհվել: Հավելենք, որ Սիրիայի հայկական թաղամասերում իրավիճակը հանգիստ է:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՕՐԵՐ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը դեռեւս 2023-ին հրաման է ստորագրել, որով հաստատել է հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2024-2025 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (1-ին, 4-րդ, 9-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարաններ):

Արձակուրդները 2024-2025 ուսումնական տարում.

1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ, ձմեռային՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ից 2025 թվականի հունվարի 5-ը ներառյալ, գարնանային՝ 2025 թվականի մարտի 24-ից 30-ը ներառյալ:

2) Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2024 թվականի հոկտեմբերի 14-ից 27-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ից 2025 թվականի հունվարի 19-ը ներառյալ, գարնանայինը՝ 2025 թվականի մարտի 17-ից 30-ը ներառյալ:

3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2024 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ից 2025 թվականի հունվարի 19-ը ներառյալ եւ գարնանայինը՝ 2025 թվականի մարտի 24-ից 30-ը ներառյալ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԻՆԵՐԻ

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ ԱՇԽԱՐՀԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ

Աշխարհի հայկական եկեղեցիների միացյալ ներկայացուցիչները միասնաբար դիմել են աշխարհի քրիստոնյաներին՝ Ադրբեջանում կալանքի տակ պահվող ռազմագերիներին ու քաղաքացիական անձանց անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակելու հրատապ կոչով: Այն արտահայտում է խոր հավատարմությունը քրիստոնեական արժեքներին եւ մարդկային արժանապատվությանը, ընդգծում խաղաղության ու հաշտեցման հրատապ անհրաժեշտությունը: Կոչն ընդգծում է բռնությունը եւ անմարդկային վերաբերմունքը դադարեցնելու կարեւորությունը, անկախ ազգությունից, բոլոր մարդկանց բնածին արժանապատվության հանդեպ հարգանքի դրսեւորումը:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տեւական խաղաղության ճանապարհը կարող է հարթվել միայն մարդասիրական խնդիրների լուծման՝ ռազմագերիների եւ այնտեղ պահվող քաղաքացիական անձանց հայրենադարձման միջոցով:

Ստորեւ ներկայացված է նրանց նամակ-կոչը, որն ստորագրել են հարյուրից ավելի հոգեւորականներ.

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Մենք՝ աշխարհի հայկական եկեղեցիների ներկայացուցիչներս, միասնաբար դիմում ենք Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիներին ու քաղաքացիական անձանց անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակելու այս խնդրանքով:

Սա պարզապես անմեղ մարդկանց ազատ արձակելու կոչ չէ, այլ արդարության, արժանապատվության եւ մարդկության վերականգնման խնդրանք: Այս անձինք, որոնց ձերբակալել են հակամարտության ընթացքում, ենթարկվում են աներեւակայելի տառապանքների, եւ նրանց շարունակական կալանքը մարդկային պարկեշտության եւ քրիստոնեական կարեկցանքի բոլոր սկզբունքների ոտնահարում է:

Հանուն մեր ընդհանուր հավատքի՝ մենք այլեւս չենք կարող լռել: Հիմա գործելու ժամանակն է:

Գերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքը հակասում է մեր հավատքի բուն էությանը: Պետք է վերջ դնել նրանց հանդեպ բռնությանը, տառապանքին ու զրկանքներին: Աշխարհը չի կարող անտարբեր մնալ, քանի դեռ անմեղ մարդիկ գերեվարված են, զրկված արժանապատվությունից եւ մարդու հիմնարար իրավունքներից: Այս իրավիճակի լրջությունը հասկանալը չափազանց կարեւոր է, քանի որ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի առողջական վիճակն օրեցօր վատթարանում է: Ռուբենն այս պահին շարունակում է հացադուլը՝ ի նշան բողոքի ադրբեջանական իշխանությունների կողմից բեմադրված թատերական «դատավարության»: Ամեն հաջորդող օր չափազանց ծայրահեղ է դարձնում իրավիճակը:

Մենք չենք կարող ընդունել եւ չենք ընդունի այնպիսի ապագա, որտեղ նման անմարդկայնությունը տեղ ունի: Տարածաշրջանի բոլոր ժողովուրդները՝ հայերը, ադրբեջանցիներ, ցանկացած այլ ազգություն, արժանի են խաղաղության: Այն կառուցվում է արդարության հենքի վրա. խաղաղություն, որտեղ պաշտպանված է յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը, որտեղ գոյություն չունեն տառապանքի շղթաներ, եւ որտեղ յուրաքանչյուր մարդկային հոգի ապրում է ազատության մեջ:

Մենք՝ աշխարհասփյուռ հայկական եկեղեցիներս, պահանջում ենք բոլոր ռազմագերիների եւ քաղաքացիական պահվող անձանց անհապաղ վերադարձն իրենց ընտանիքներ: Սա զուտ մարդասիրական անհրաժեշտություն չէ, սա բարոյական հրամայական է: Հայ գերիների ազատ արձակումը կարող է բացել նոր էջ, որտեղ առողջացումը կփոխարինի ատելությանը, որտեղ հասկացողությունը կհաղթահարի բաժանարարությանը, որտեղ խաղաղությունը պարզապես երազանք չէ, այլ իրականություն:

Մենք կոչ ենք անում կառավարություններին, միջազգային կազմակերպություններին եւ բոլոր բարի կամքի տեր մարդկանց դատապարտել ցուցադրական այս դատավարությունը՝ որպես քաղաքական եւ ոչ լեգիտիմ, եւ ճնշում գործադրել դրանում ներգրավված իշխանությունների վրա՝ վերադարձնելու այս անմեղ մարդկանց իրենց հարազատ տները: Երես մի թեքե՛ք այլոց տառապանքներից: Կանգնե՛ք մեր կողքին: Կանգնե՛ք հանուն արդարության եւ խաղաղության»:

Ն. Պ.

ՄԱՐՔԱԿԱՆ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍԵՐԸ

El Nacional-ը, վկայակոչելով լրագրող Մարսալ Լորենտեի տեղեկությունը, հայտնել է Կիլիան Մբապեի՝ Մադրիդի «Ռեալ» տեղափոխության ֆինանսական մանրամասները: Աղբյուրի համաձայն՝ «Ռեալը» վերջերս ֆրանսիացի հարձակվողին 117 միլիոն եվրո պայմանգրով նախատեսված բոնուս է վճարել՝ գումարած տարեկան աշխատավարձը: Մբապեն ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ է տեղափոխվել Մադրիդի «Ռեալ»: Այս մրցաշրջանում ֆրանսիացին բոլոր մրցաշարերում անցկացրել է 39 հանդիպում՝ դառնալով 27 գոլի եւ չորս գոլային փոխանցման հեղինակ:

Հիշեցնենք, որ Մբապեն ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ հեռացել է ՊՍԺ-ից եւ մինչեւ 2029 թվականը նախատեսված պայմանագիր է կնքել Մադրիդի «Ռեալի» հետ:

ՉԱՎԻՆ ԽՈՍԵԼ Է ՀԱՂԹԱՆԱԿԻՑ

Իսպանիայի հավաքականի նախկին կիսապաշտպան Չավին խոսել է Եվրոպայի երկու առաջնություններում ու աշխարհի առաջնությունում թիմի հաղթանակների նշանակության մասին: «Նախկինում աշխարհի առաջնությունում իսպանացի խաղացողի հաղթանակն ուտոպիա էր: Դա պատիվ էր տրված իտալացիներին, գերմանացիներին, բրազիլացիներին, արգենտինացիներին: 2008-2012 սերնդի գալով մենք փոխեցինք այս մտածելակերպը: Քառորդ եզրափակիչ դուրս գալն արդեն իսկ ձեռքբերում էր: Այսօր, եթե չհաղթենք, ապա դա ձախողված կհամարվի: Մենք փոխեցինք իսպանական ֆուտբոլի պատմությունը: Այս թիմը հավերժ կհիշվի»,- Չավիի խոսքերն է մեջբերում AS-ը:

Հիշեցնենք, որ 2008-2012 թվականներին Իսպանիայի հավաքականը հաղթել է բոլոր երեք խոշոր մրցաշարերում անընդմեջ: Նախ Վիսենտե դել Բոսկեի թիմը հաղթել է Եվրո-2008-ում, հետո դարձել է 2010 թվականի աշխարհի առաջնության հաղթող, որից հետո հաղթել է Եվրո-2012-ում:

ՄԱՍԿԵՐԱՆՈՅԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ինտեր Մայամիի» գլխավոր մարզիչ Խավիեր Մասկերանոն բացատրել է, թե ինչու արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսին դաշտ դուրս չեկավ «Շառլոտի» դեմ MLS-ի 3-րդ տուրի խաղում: Հանդիպումը կայացել է Ֆորտ Լոդերդեյլ քաղաքում եւ ավարտվել 1:0 հաշվով՝ հօգուտ տանտերերի: 38-րդ րոպեին «Ինտեր Մայամին» մնացել է 10 հոգով այն բանից հետո, երբ դարպասապահ Օսկար Ուստարին կարմիր քարտ է ստացել: «Իրականությունն այն է, որ Լեոյի հետ մենք մտածում էինք նրան խաղաժամանակ տրամադրելու մասին: Բայց քանի որ մենք խաղում էինք տասը հոգով, եւ նաեւ հաշվի առնելով, որ նա բաց թողեց մի քանի հանդիպում, մտածեցինք, որ ավելի լավ է խնայել նրան: Մենք չէինք ցանկանում ռիսկի դիմել»,- Մասկերանոյի խոսքերն է մեջբերում ESPN-ը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Գ

ԲԱՆԿԸ ՍՏԱՑԵԼ Է ՈՍԿԵ ՄԱԿԱՐԴԱԿ

«Ակբա» բանկը միջազգային հեղինակավոր MFR գործակալության կողմից արժանացել է «Հաճախորդների պաշտպանության հավաստագրման» (Customer protection certification) ամենաբարձր՝ոսկե մակարդակի: MFR-ի կողմից «Ակբա» բանկի հավաստագրումը եւս մեկ անգամ արտացոլում է՝

բանկում հաճախորդների հետ գործարար հարաբերությունների համապատասխանությունը հաճախորդների սպասարկման միջազգային չափանիշներին,

բանկի՝ հաճախորդակենտրոն գործունեության ընկալման բարձր մակարդակը,

հաճախորդների սպասարկման մեծ փորձառությունը:

«Ակբա» բանկի մասին

«Ակբա» բանկը Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից է, երկրի գյուղոլորտի ֆինանսավորման բացարձակ առաջատարը: 2021 թվականին իրականացված բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից (IPO) հետո «Ակբա» բանկն ունի ավելի քան 5200 բաժնետեր: Թվային նորագույն լուծումների ներդրման, ինչպես նաեւ նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ բանկն անդադար զարգացնում է տրամադրվող ֆինանսական ծառայությունների քանակն ու որակը: «Ակբան» ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, ունի 65 մասնաճյուղ, համարվում է երկրի եւ ֆինանսական համակարգի խոշոր գործատուներից մեկը:

MFR-ի մասին

MFR-ը միջազգային վարկանիշային գործակալություն է, որն իրականացնում է գնահատումներ, տրամադրում տեխնիկական փորձագիտական աջակցություն ֆինանսական ոլորտին:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 25-ին Երեւանի քաղաքապետի կողմից տրվել է Կենտրոն վարչական շրջան, Վարդանանց փողոց հ.18 շենք, հհ. 3, 12 տարածքների եւ հհ. 4, 13 շինությունների հասցեներում հասարակական տարածքների վերակառուցման՝ մուտքերի իրականացման եւ վերահատակագծման թիվ ՇԹ/6/2906-25 շինարարության թույլտվությունը, որի վերաբերյալ ամբողջական կարելի է ծանոթանալ labeerint.am/այլ/ համացանցային կայքէջի միջոցով:

Սույն հայտարարությունը հանդիսանում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացված հրապարակման եղանակով իրազեկում:

● *«Բոհեմ» թատրոնում մարտի 12-ին տեղի կունենա «3033» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2500, 3000, 3500, 4000, 4500, 5000, 6000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք՝ կենսաթոշակից ինչ չափով պահումներ կարող են կատարվել:

Էմմա Ամրոյան (67 տարեկան, թոշակառու)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ կենսաթոշակից պահումներ կարող են կատարվել՝

1) օրինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների հիման վրա, սակայն նշանակված կենսաթոշակի 30 տոկոսից ոչ ավելի.

2) սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաեւ կենսաթոշակառուի՝ սույն օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելու հետեւանքով կամ սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) նրան ավել վճարված գումարները հետ գանձելու մասին կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշման եւ կենսաթոշակառուի գրավոր համաձայնության հիման վրա, սակայն նշանակված կենսաթոշակի 15 տոկոսից ոչ ավելի, եթե ավել վճարված կենսաթոշակի գումարի չափը չի գերազանցում որոշումը կայացնելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակի գումարի կրկնապատիկը: Կենսաթոշակից կատարվող պահումների չափը հաշվարկվում է կենսաթոշակառուին վճարվող ամսական գումարից:

Կենսաթոշակից կատարվող պահումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի կենսաթոշակի 30 տոկոսը: Կենսաթոշակից կատարվող պահումների չափը համամասնորեն փոխվում է կենսաթոշակի չափը փոխվելու դեպքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ արդյոք միայն վարդապետները կարող են լինել կուսակրոն, թե յուրաքանչյուր քահանա իր ցանկությամբ:

Գոհար Հունանյան (43 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կուսակրոն կամ ամուսնացյալ քահանա դառնալու որոշումը կայացնում են մինչեւ ձեռնադրվելը՝ սարկավագ եղած ժամանակ: Թե՛ ամուսնացյալ, թե՛ կուսակրոն սարկավագները քահանա են ձեռնադրվում նույն ծեսով, կարող են անգամ միաժամանակ ձեռնադրվել: Նույն օրը՝ երեկոյան, ձեռնադրող եպիսկոպոսը կամ կաթողիկոսը կուսակրոնության ճանապարհ ընտրած քահանաներին տալիս են վեղար, որը չեն կարող կրել ամուսնացյալները:

Քահանա են կոչվում բոլոր ձեռնադրվածները՝ կուսակրոն, թե ամուսնացյալ, սակայն, ի տարբերություն ամուսնացյալ քահանաների, կուսակրոններն իրավունք ունեն ստանալ մի քանի աստիճան՝ աբեղա, վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս: Հաճախ հայրաբանական գրականության մեջ նրանց բոլորին կոչում են քահանա:

Օրինությամբ՝ Տ. Շմավոն քահանա Ղեւոնդյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ամուսնացյալներին կուսակրոններից տարբերում են վեղարով: Դա գլխի բրգաձեւ ծածկոց է, որը կրում են միայն կուսակրոնները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Երեկ ավտովթար է տեղի ունեցել Արարատի մարզում: Երեւան Մեղրի ավտոճանապարհի 88 կմ հատվածում՝ Տիգրանաշենի ոլորաններում, բախվել են Dodge մակնիշի ավտոմեքենան եւ Foton մակնիշի բեռնատարը:

1 հոգի տեղափոխվել է «Արարատ» բժշկական կենտրոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 12+ 15
Կոտայքի լեռներ	0 - 3 + 11+ 14
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 +16 + 18
Գեղարքունիք	0 - 4 + 11+ 14
Լոռի	- 3 + 2 +15 + 18
Տավուշ	+ 1 + 5 +18 + 22
Արագածոտնի լեռներ	- 1 - 5 +14 + 18
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 4 +15 + 18

Արարատ	+ 3 + 5 + 17+ 20
Արմավիր	+ 3 + 5 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	- 11 - 14 - 6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 5 + 19+ 22
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 + 20+ 24
Սյունիքի նախալեռներ	- 2 + 3 +15 + 18
ԼՂՀ	- 2 + 3 +15 + 19
Երեւան	+ 2 + 4 +14 + 16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.3.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*